На примере Армянской АЭС исследовано функционирование систем безопасности в случае проектной аварии с потерей теплоносителя. Определено влияние внедрения сетчатого фильтра приемка герметических помещений на кавитационный запас насосов высокого давления системы аварийного охлаждения активной зоны и спринклерной системы. Выявлено, что непрерывная работа спринклерной системы уменьшает давление в герметических помещениях ниже атмосферного, что в совокупности с установкой сетчатого фильтра приводит к снижению кавитационного запаса насосов систем безопасности ниже допустимого значения.

Ключевые слова: сетчатый фильтр, система аварийного охлаждения активной зоны, спринклерная система.

Введение. Программа повышения безопасности Армянской АЭС предусматривает увеличение максимальной проектной аварии до разрыва трубопровода первого контура диаметром 2х209 мм [1,2]. Для достижения данной цели планируется внедрение мероприятий по модернизации существующих систем безопасности, в том числе системы аварийного охлаждения зоны (САОЗ) и спринклерной системы. После модернизации САОЗ система сможет обеспечить долгосрочное охлаждение активной зоны в условиях низкого давления в первом контуре. Данный эффект будет достигнут установкой трехходовых клапанов с линиями рециркуляции. Планируемая модернизация спринклерной системы призвана увеличить резервирование и пропускную способность системы добавлением дополнительного насоса и разделением на два независимых канала. Однако для должной работоспособности вышеупомянутых систем прежде всего необходимо произвести рециркуляцию через приемок герметических помещений. Для решения данной задачи был установлен сетчатый фильтр приемка герметических помещений, который должен обеспечить необходимый для рециркуляции расход, даже в условиях засорения мусором.


В данной работе рассмотрены вопросы, связанные с функционированием насосов САОЗ высокого давления (ВД) и спринклерной системы Армянской АЭС при новой проектной аварии с разрывом дыхательного трубопровода компенсатора давления (КД) после внедрения сетчатого фильтра приемка герметических помещений.

Методика расчетов. Для проведения расчетов была разработана расчетная схема герметических помещений ААЭС для кода COCOSYS [3,4]. Помещения были смоделированы при помощи 26 узлов, соединенных между собой 56 атмосферными и дренажными соединениями. Для моделирования облицовки стен были использованы 53 тепловые структуры. Модель отражает состояние герметических помещений 2-го блока ААЭС после планируемых модернизаций, т.е. с улучшенной плотностью, модифицированной системой САОЗ и установленным фильтром прямка (рис. 1).

Основываясь на консервативном подходе, были выбраны начальные и граничные условия в герметических помещениях ААЭС.

Для расчетов была выбрана авария с двусторонним разрывом дыхательного трубопровода компенсатора давления диаметром 2х209 мм.

Выбросы энергии и массы для данной аварии были рассчитаны при помощи кода RELAP5 MOD3 [5].



Для достижения большой фильтрационной площади были установлены фильтрационные модули с прямоугольным сечением, число и размер которых были определены, основываясь на:

- количестве генерируемого мусора;
- оценке эффектов потока;
- расчетах гидравлического сопротивления фильтра и предварительных гидравлических тестов.

Проект предусматривает 65 м² фильтрационной поверхности. Фильтрационная поверхность состоит из стальных перфорированных листов толщиной 4 мм с отверстиями диаметром 10 мм. Внешняя поверхность перфорированных листов покрывается сеткой с размером стороны ячейки 0,7 мм.

Прямо́к и фильтры были смоделированы при помощи двух объемов. Первый из них представляет нефiltrуемый объем прямо́ка, второй – объем внутри фильтрующих модулей. Эти два объема разделены сеткой (рис. 2).




Рис. 2. Схема моделирования прямо́ка гермозоны

Для моделирования эффекта засорения фильтра была использована специальная модель COCOSYS. Данная модель решает следующее уравнение для расчета гидравлического сопротивления вследствие накопления мусора:

$$\Delta p = \pm(K\gamma\eta)|v|^{0.5}, \quad (1)$$

где Δp – дополнительные потери давления; K – коэффициент потерь; η – плотность покрытия; v – скорость потока.

Как следует из уравнения, потери давления вследствие накопления мусора зависят от плотности покрытия мусора и коэффициента потерь. Данный коэффициент определяется экспериментальным путем. Для ААЭС данный коэффициент был определен на экспериментальной установке, эксплуатируемой VUEZ, и

согласно полученным результатам для разрыва трубопровода эквивалентным диаметром 200 мм плотность покрытия мусором составляет $2,1 \text{ кг/м}^2$, а потери давления – $3,3 \text{ кПа}$. Исходя из этого значения, был рассчитан коэффициент потерь для расхода $1550 \text{ м}^3/\text{час}$ (максимальный проектный поток), который равен $4 \cdot 10^9$.

Интерпретация и анализ результатов расчетов. Во время расчетов были оценены возможности спринклерной системы и взрывных клапанов поддерживать давление в герметических помещениях ниже атмосферного для предотвращения выхода радионуклидов за пределы герметической оболочки. Кроме того, на основе результатов расчета был оценен допустимый кавитационный запас (ДКЗ) насосов спринклерной системы и САОЗ.

Вследствие разрыва и поступления пароводяной смеси в герметические помещения давление начинает повышаться и на 5-й секунде от начала аварии доходит до уставки открытия взрывных клапанов. Однако из-за сопротивления клапанов их полное открытие происходит с задержкой, и давление продолжает повышаться, достигая на 8-й секунде максимального значения – $0,195 \text{ МПа}$. Начиная с этого момента и до 300-й секунды клапаны периодически открываются, и давление в герметических помещениях не превышает значения $0,2 \text{ МПа}$ (проектный предел). После 300-й секунды давление в герметических помещениях начинает снижаться по причине работающей спринклерной системы (система активируется на 48-й секунде) и на 940-й секунде от начала аварии достигает атмосферного. Поскольку спринклерная система непрерывно конденсирует пар, давление продолжает снижаться и достигает значения $0,061 \text{ МПа}$ на 3260-й секунде. Необходимо отметить, что на ААЭС отсутствует уставка автоматического отключения спринклерной системы, и система продолжает работать, несмотря на сильное разрежение. Начиная с 3260-й секунды давление в герметических помещениях медленно повышается и на 37000-й секунде достигает атмосферного (рис. 3).




Рис. 3. Изменение давления в герметической зоне во время аварии

В данных расчетах было учтено засорение сетчатого фильтра приемка гермозоны мусором, сгенерированным при разрыве дыхательного трубопровода, на 300-й секунде с начала аварии. Как было указано выше, при засорении фильтра приемка создается дополнительное гидравлическое сопротивление, которое приводит к снижению расхода в приемок и, следовательно, к уменьшению количества поступающей воды в бак аварийного запаса борной кислоты. После засорения фильтра начинается заполнение объема фильтра, и на 2978-й секунде уровень воды в приемке сравнивается с уровнем воды на полу гермозоны. Дальнейший рост уровня воды в герметических помещениях продолжается до 10000-й секунды. К этому времени гидростатическое давление, образующееся за счет уровня воды, компенсирует сопротивление, создаваемое засорением поверхности фильтра, и расход воды в бак аварийного запаса борной кислоты сравнивается с количеством воды, подаваемой на всас насосов САОЗ и спринклерной системы. Начиная с этого момента уровень воды в баке аварийного запаса борной кислоты остается на уровне 3,91 м (рис. 4).




Рис. 4. Изменение уровня воды в баке Б-8/2

Для оценки кавитационного запаса (КЗ) насосов САОЗ и спринклерной системы использовалась формула

$$КЗ = (L_B - L_{всас}) + \frac{P_{атм}}{\rho g} - \frac{P_{нас}}{\rho g} - \frac{P_{пот}}{\rho g}, \quad (2)$$

где L_B — уровень воды в баке аварийного запаса борной кислоты; $L_{всас}$ — высотная отметка всаса насоса; $P_{атм}$ — давление в герметических помещениях; $P_{нас}$ — давление насыщения на всасе насоса при заданной температуре; $P_{пот}$ — потери напора на импеллере насоса; ρ — плотность воды; g — гравитационная константа.

Согласно техническим характеристикам насосов САОЗ ВД и спринклерной системы, необходимый кавитационный запас должен составлять 6 и 8 м соответственно. Как видно из результатов, кавитационный запас насосов САОЗ ВД ниже необходимого значения начиная с 2500-й секунды и до 5000-й секунды включительно (рис. 5).




Рис. 5. Значение кавитационного запаса для насосов САОЗ ВД

Для насосов спринклерной системы значение кавитационного запаса ниже допустимого в течение временного отрезка с 1600-й секунды и до 13000-й секунды включительно (рис. 6).




Рис. 6. Значение кавитационного запаса для насосов спринклерной системы

Для определения условий, при которых КЗ насосов был на допустимом уровне, были проведены дополнительные расчеты. Для оценок были выбраны консервативные условия в гермозоне. Поскольку в рамках программы комплексной модернизации ААЭС минимально допустимое значение давления в гермозоне было равно 0,085 МПа, то для оценки ДКЗ было выбрано данное значение.

Для насосов САОЗ ВД при максимальной температуре в баке запаса борного раствора Б-8/2 79°C и давлении в гермозоне, равном 0,085 МПа, необходимый кавитационный запас будет достигнут при уровне в баке, равном 2,71 м (таблица 1).

Таблица 1

Кавитационный запас насосов САОЗ ВД

Уровень в баке	dH	P _{атм}	P _{нас}	P _{потери}	КЗ
2,0	1,600	8,673	4,617	0,357	5,299
2,5	2,100	8,673	4,617	0,357	5,799
2,7	2,300	8,673	4,617	0,357	6,000
3,0	2,600	8,673	4,617	0,357	6,299
3,5	3,100	8,673	4,617	0,357	6,799

Для насосов спринклерной системы при тех же консервативных условиях необходимый кавитационный запас будет достигнут при уровне в баке, равном 3,98 м (таблица 2). Отклонение от рассчитанного минимального уровня – 3,91 м составляет 1,8%.

Таблица 2

Кавитационный запас насосов спринклерной системы

Уровень в баке	dH	P _{атм}	P _{нас}	P _{потери}	КЗ
3,5	3,745	8,673	4,542	0,357	7,519
3,91	4,155	8,673	4,542	0,357	7,929
3,98	4,225	8,673	4,542	0,357	8,000
5,2	5,445	8,673	4,542	0,357	9,219
7,0	7,245	8,673	4,542	0,357	11,019

Выводы. Основываясь на результатах анализов аварии с двусторонним разрывом дыхательного трубопровода КД, можно сделать следующие выводы:

1. Пиковое давление в гермозоне равно 0,195 МПа, что не превышает максимально допустимого значения 0,2 МПа.

2. Непрерывная работа спринклерной системы приводит к снижению давления в гермозоне ниже атмосферного давления. В частности, в данных расчетах было достигнуто значение 0,061 МПа, что ниже минимально допустимого пре-

дела – 0,085 МПа. Следовательно, необходимо внедрение защиты от сильного разрежения.

3. Расчет кавитационного запаса для насосов САОЗ ВД и спринклерной системы показал, что во время аварии значение кавитационного запаса ниже необходимого кавитационного запаса. Были проведены дополнительные исследования по выявлению минимального давления в гермозоне, при котором кавитационный запас будет выше минимально допустимого значения. Из результатов расчетов следует, что значение кавитационного запаса остается в допустимых пределах, если давление в гермозоне выше 0,085 МПа.

СПИСОК ЛИТЕРАТУРЫ

1. Разработка комплексной программы модернизации Армянской АЭС - NRI Rez, VUJE a.s, Арматом и НТИЦ ЯРБ контракт МАГАТЭ № ARM9022-86943V.
2. NS-R-2 Safety of Nuclear Power Plants: Operation /J. Clifford, et al. – Vienna; IAEA. – 2000. – 40 p.
3. COCOSYS V2.4 User's Manual /W. Klein-Heßling, S. Arndt, et al. – Koln: Gesellschaft für Anlagen- und Reaktorsicherheit (GRS) mbH, 2013. - 793p.
4. State-of-the-Art Report on Containment Thermal-hydraulics and Hydrogen Distribution / H. Karwat, et al. – Paris: OECD/NEA, 1999. – 291 p.
5. RELAP5/MOD3.3 code manual /V.H. Ransom, J.A. Trapp, et al. – Rockville: Information Systems Laboratories, 2010. – 298 p.
6. Final report of the programme on the safety of WWER and RBMK nuclear power plants / C. Benedetti, et al. – Vienna; IAEA. – 1999. – 218 p.

Национальный политехнический университет Армении. Материал поступил в редакцию 09.11.2014.

Վ.Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Հ.Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՎԹԱՐԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ՀԱԷԿ 2-ՐԴ ԷՆԵՐԳԱԲԼՈՎԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊՈՄՊԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱԷԿ-ի օրինակով ուսումնասիրվել է անվտանգության համակարգերի աշխատանքը նախագծային ջերմատարի կորստով վթարի դեպքում: Որոշվել է հերմետիկ գոտու ելարանի գտիչի ներդրման ազդեցությունը վթարային լրասնման համակարգի և ցայտաջրմուղային համակարգի պոմպերի կավիտացիոն պաշարի վրա: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ցայտաջրմուղային համակարգի անընդհատ աշխատանքը հանգեցնում է հերմետիկ գոտում ճնշման անկմանը մթնոլորտային ճնշումից ցածր, ինչը համակցված գտիչի տեղադրմանը զուգընթաց հանգեցնում է անվտանգության համակարգերի պոմպերի կավիտացիոն պաշարի նվազմանը թույլատրելի արժեքից ցածր:

Առանցքային բառեր. ցանցկեն գտիչ, ակտիվ գոտու վթարային հովացման համակարգ, ցայտաջրմուղային համակարգ:

V.G. PETROSYAN, H.A. HOVHANNISYAN

**INVESTIGATING THE OPERATION OF THE SAFETY SYSTEMS' PUMPS OF THE
ARMENIAN NPP SECOND UNIT AT DESIGN BASIS ACCIDENT**

Based on Arm. NPP example the operation of the safety systems in case of the design basis loss of coolant accident is investigated. The influence of containment sump strainer implementation on the net positive suction head of high-pressure injection pumps of emergency core cooling system and spray system is determined. It is revealed that the continuous operation of the spray system leads to a decrease in pressure in the containment below atmospheric pressure, what in conjunction with the strainer installation leads to the safety systems' pumps net positive suction head decrease below the allowable value.

Keywords: reticulated strainer, emergency core cooling system, spray system.

ՀՏԴ 621.315:621.382

ԳԻՏԱԿԱՆ ՄԱՐՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՉԱՓՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ

Լ.Հ. ՍՈՒՔՈՅԱՆ, Վ.Վ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ, Տ.Վ. ՎԱՂՈՒՆՑ

**ՖԵՐՈՒԼԵԿՏՐԻԿ-ՕՔՍԻԴ-ԿԻՍԱՀԱՂՈՐԴՉ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ
ԸՍՏ ՀԱՃԱԽՈՒԹՅԱՆ ՍՈՂՈՒԼԱՑՎԱԾ ԼՈՒՍԱՑԻՆ ԱԶԴԱՆՇԱՆԻ ՌԵԺԻՄՈՒՄ**

Տեսականորեն հետազոտվել են ունակային սկզբունքով աշխատող ֆերոլեկտրիկ – օքսիդ – կիսահաղորդիչ կառուցվածքի ֆոտոզգայնության մեխանիզմներն ու ընթացող օպտիկա-ֆիզիկական երևույթներն ըստ ինտենսիվության / հաճախականության մոդուլացված լույսի ազդման դեպքում: Հիմնավորվել է ըստ ինտենսիվության/հաճախականության մոդուլացված լուսային ճառագայթի միջոցով տարբեր մեմբրաններից ստացված համապատասխան ֆոտո-արձագանքների գրանցման, տարանջատման ու մշակման հնարավորությունը:


Առանցքային բառեր. ֆերոլեկտրիկ, մոդուլացված լույս, կիսահաղորդիչ, ՄՕԿ կառուցվածք:

Ներածություն: Լուսահասցեավորվող պոտենցիալմետրական տվիչները (ԼՊՏ, [1]) «լաբորատորիա չիպի վրա» սկզբունքի իրականացման առաջին քայլերն են, որոնք հնարավորություն են տալիս միևնույն հիմքով (մատրիցում) միավորել կենսաբժշկական տարբեր անալիտների նկատմամբ զգայնություն ցուցաբերող բազմաթիվ տարրեր, կառուցվածքներ և, այնուհետև, ըստ ինտենսիվության կամ ըստ հաճախականության մոդուլացված լուսային ճառագայթի միջոցով այդ տարբեր թաղանթներից ստացված համապատասխան ֆոտոարձագանքների գրանցման, տարանջատման ու մշակման միջոցով որոշել այս կամ այն անալիտի առկայությունը, պարամետրերը, խտությունը և այլն: Նշված ԼՊՏ-երը գտնվում են նախնական լաբորատոր հետազոտման փուլում և կարիք ունեն ինչպես տեսական, այնպես էլ փորձարարական հետազոտման, ինչը հատուկ է ցանկացած նոր գիտական բնագավառի: Մյուս կողմից, շնորհիվ իրենց մի շարք առավելությունների՝ բազմաֆունկցիոնալ հատկությունների դրսևորման, բարձր քիմիական և կատալիտիկ ակտիվության, ֆերոլեկտրիկական զգայուն թաղանթներով տվիչները կենսաբժշկական բնագավառում օգտագործման տեսակետից նոր և խոստումնալից սարքեր են, որոնք կարող են հիմք հանդիսանալ «լաբորատորիա մեկ չիպի վրա» տեխնոլոգիայի զարգացման համար [1-5]:

Աշխատանքում տեսականորեն հետազոտվել են երկու մեմբրաններ պարունակող ֆերոլեկտրիկ-օքսիդ-կիսահաղորդիչ կառուցվածքի ունակության և ֆոտոլեկտրական բնութագրերն ըստ հաճախության մոդուլացված լուսային ազդանշանի կիրառման ռեժիմում:

Տեսական մոդելը և հիմնական առնչությունները: Դիցուք ունենք երկու՝ m_1 , m_2


փականներ, որոնք միմյանցից հեռացված են ֆոտոլիցքակիրների դիֆուզիոն (ռեկոմբինացիոն) երկարություններից շատ ավելի մեծ հեռավորության վրա: Այդ փականները կարող են պատված լինել տարբեր իոնների նկատմամբ ընտրողական զգայնություն ցուցաբերող մեմբրաններով (թաղանթներով)՝ սենսորային տարբեր ֆունկցիաների իրականացման նպատակով: Ընդունենք, որ երկու փականներին էլ կիրառված է միևնույն V_g հաստատուն շեղման լարումը (ընդհանուր հիմնային տարրի միջոցով), բայց մոդուլացված լույսի աղբյուրն ազդում է միայն դրանցից մեկի աղբատացած շերտի վրա (նկ. 1): Անտեսելով հարթակի չեզոք տիրույթի R_{sub} դիմադրությունը ծավալային լիցքի տիրույթի R_{sc} -ի և R_m -ի նկատմամբ, օքսիդի շերտում ավելցուկային (լրացուցիչ) դրական լիցքերն ու թակարդներում գրավված լիցքերը, ինչպես նաև օքսիդ-կիսահաղորդիչ մակերևութային մակարդակների առկայությունը, փականների և միջփականային տիրույթները կներկայացնենք համապատասխան համարժեք սխեմայի տեսքով (նկ. 2):



Նկ. 1. Երկմեմբրանային I_{DS} -ի լայնական կտրվածքը

Ընդունենք, որ p-Si հարթակի (կամ փականի) կողմից բյուրեղի վրա ընկնում է ըստ ինտենսիվության մոդուլացված օպտիկական ճառագայթ (ազդանշան),

$$\Phi = \Phi_o + \Phi_I e^{j\omega t},$$



Նկ. 2. Երկմեմբրանային LMS-ի համարժեք սխեման

որտեղ Φ_o - ն ընկնող ճառագայթի հոսքի (հզորության) հաստատուն բաղադրիչն է միավոր մակերևույթին՝ $\Phi_o = \frac{P_{opt}(1-R)}{h\nu} [1 - e^{-\alpha d_o}]$, P_{opt} -ը՝ ընկնող օպտիկական հզորությունը (ν - լսմ/սմ²), R -ը՝ անդադարձման գործակիցը, S - ը՝ աղքատացած շերտի լայնական կտրվածքի մակերեսը, $h\nu$ -ն՝ ֆոտոնի էներգիան, Φ_I -ը՝ ընկնող ճառագայթի հոսքի փոփոխական բաղադրիչը, $\omega = 2\pi f$ - ը՝ լուսային ազդանշանի մոդուլման անկյունային հաճախությունը, t -ն՝ ժամանակը: Եթե մոդուլացված լույսի աղբյուրն «աշխատում է» որևէ (աջ կամ ձախ) փականի աղքատացած տիրույթում, ապա օգտվելով Պուասոնի՝ հոսանքի անխզելիության, հոսանքի խտության հավասարումներից [6] և Կիրիստի օրենքներից, ելքային ֆոտոհոսանքի $\tilde{i}_m$ փոփոխական բաղադրիչի համար կունենանք՝

$$|\tilde{i}_m| = |\tilde{i}| \cdot \left[\frac{\theta_{ox}}{1 + (\theta_{ox} + \theta_{scl})^2} \right] \sqrt{(\theta_{ox} + \theta_{scl})^2 + 1},$$

$$|\tilde{i}_{ph}| = \frac{2qd_o}{\varepsilon_s} \frac{P_{opt}(1-R)\theta}{h\nu\sqrt{1+\theta^2}} \cdot [1 - e^{-\alpha d_o}] \cdot \left[|C_{scl}(t)| + \frac{\varepsilon_s \sqrt{2}}{L_D} \right],$$


որտեղ d_o -ն լույսի բացակայության ռեժիմում աղքատացած շերտի հաստությունն է, α -ն՝ կլանման գործակիցը, $\theta = 2\pi f\tau$, τ -ն՝ ֆոտո-լիցքակիրների կյանքի տևողությունը, $L_D \equiv \sqrt{\frac{kT\varepsilon_s}{q^2 p_p^2}} \equiv \sqrt{\frac{\varepsilon_s}{qp_p\beta}}$ -ն՝ Դեբայի էկրանավորման երկարությունը, $\beta = q/kT$, q -ն՝ էլեկտրոնի տարրական լիցքը, ψ_s -ը՝ կիսահաղորդիչ-օքսիդ մակերևույթային պոտենցիալի փոփոխական բաղադրիչը, ε_s -ը՝ կիսահաղորդիչի դիէլեկտրական թափանցելիությունը, C_{scl} -ը՝ լուսային ազդանշանի առկայության դեպքում կիսահաղորդիչի աղքատացած շերտի ունակությունը, $\theta_{ox} = \omega C_{ox} R_s$, $\theta_{scl} = \omega C_{scl} \cdot R_{sc}$, R_s -ը

և R_{sc} -ը, համապատասխանաբար, հարթակի և աղքատացած տիրույթի ակտիվ դիմադրությունները լուսային ազդանշանի բացակայության ռեժիմում: Հաշվարկները կատարվել են պարամետրերի հետևյալ համախմբերի համար. $Na \rightarrow (1...100) \cdot 10^{14} \text{ սմ}^{-3}$, f մոդուլման հաճախականությունը՝ $1...10000 \text{ կՀց}$, ֆոտոլիցքակիրների կյանքի տևողությունը՝ $\tau_0 \rightarrow 10^{-6}...10^{-9} \text{ վ}$, լուսային հոսքի Φ_l - մակերևութային խտությունը՝ $\Phi_l \rightarrow 10^{10}...10^{12} \text{ Ֆոտոն/սմ}^2$, լուսային հոսքի (ինտենսիվության) մոդուլման օրենքը՝ $\sin$ -ալ, օքսիդային շերտի հաստությունը՝ $t_{ox} \rightarrow (30...150) \text{ նմ}$, փականի լարումը՝ $V_g \rightarrow (0..5) \text{ Վ}$, աղքատացած շերտի շունտող R_{sc} դիմադրությանը՝ $\sim 5 \text{ ՄՕհմ}$, օքսիդի շերտի շունտող R_s դիմադրությանը՝ $\sim 10 \text{ ՄՕհմ}$, $\varepsilon_{si} \sim 11,8$, $\varepsilon_o = 8.85 \cdot 10^{-14} \text{ Ֆ/սմ}$: Հաշվարկներում անտեսվել են Հելմհոլցի կրկնակի շերտի ունակությունը, R_{ef} էլեկտրոդի և հարթակի չեզոք մասի դիմադրությունները, չափիչ սարքի և սնման աղբյուրի ներքին դիմադրությունը և այլն: Նկ. 3-5-ում պատկերված են արտաքին շղթայում չափվող փոփոխական $\tilde{I}_m$ հոսանքի կախվածությունները լուսային ազդանշանի մոդուլման f հաճախությունից, լիցքակիրների կյանքի τ տևողությունից, փականին կիրառված V_g լարումից, օքսիդային շերտի t_{ox} հաստությունից, լույսի հոսքի Φ_o -ինտենսիվությունից, կլանման α գործակցից, հարթակի լեգիրման Na աստիճանից և այլն:


Ինչպես և սպասվում էր, լուսային հոսքի ինտենսիվության աճը հանգեցնում է աղքատացած շերտի ունակության աճման (աղքատացած շերտի հաստության նվազման): Ինչպես հետևում է կիսահաղորդչային ֆիզիկայի ընդհանուր դրույթներից, մակերևութային պոտենցիալի, աղքատացած շերտի նվազման, աղքատացած շերտի ունակության փոփոխությունները պետք է նկատվեն լուսային ազդանշանի և ֆոտոգեներացված լիցքակիրների կյանքի տևողության որոշակի հարաբերակցության պայմաններում: Եթե լուսային ազդանշանի մոդուլման հաճախականությունը շատ փոքր է ֆոտոլիցքակիրների կյանքի տևողության հակադարձ մեծությունից $f \leq \frac{1}{\tau}$, ապա ֆոտոլիցքակիրներն այդ ժամանակահատվածում կհասցնեն ռե-

կոմբինացվել և չեն կարող հետևել “լուսային” ազդանշանի փոփոխությանը:

Դա նշանակում է, որ գոյություն ունի լուսային ազդանշանի և ֆոտոգեներացված լիցքակիրների կյանքի տևողության որոշակի հարաբերակցություն, որի դեպքում կարող է նկատվել մակերևութային պոտենցիալի և աղքատացած շերտի ունակության ժամանակային փոփոխություն:




Նկ. 3. Արտաքին շղթայում չափվող i_m ֆոտոհոսանքի կախումը լույսի մոդուլման f հաճախությունից Φ_0 տարբեր հոսքերի դեպքում ($Na = 10 \times 10^{15} \text{ սմ}^{-3}$, $t_{ox} = 50 \text{ նմ}$, $Vg = 1 \text{ Վ}$, $\tau = 10^{-7} \text{ վ}$, $R_s = 5 \text{ ՄՕհմ}$, $R_{sc} = 10 \text{ ՄՕհմ}$, $\alpha = 10^4 \text{ սմ}^{-1}$)



Նկ. 4. Արտաքին շղթայում չափվող i_m ֆոտոհոսանքի կախումը լույսի մոդուլման f հաճախությունից լիցքակիրների կյանքի τ տևողության տարբեր արժեքների դեպքում ($Na = 10 \times 10^{15} \text{ սմ}^{-3}$, $t_{ox} = 50 \text{ նմ}$, $Vg = 1 \text{ Վ}$, $\Phi_0 = 2.5 \cdot 10^{13} \text{ ֆոտոն/սմ}^2$, $R_s = 5 \text{ ՄՕհմ}$, $R_{sc} = 10 \text{ ՄՕհմ}$, $\alpha = 10^4 \text{ սմ}^{-1}$)


Այս կախվածությունները հստակ երևում են նկ. 3 և 4-ից: Ընդ որում, մակերևութային պոտենցիալի և աղբատացած շերտի ունակության “հագեցումը” պայմանավորված է լուսային ազդանշանի ինտենսիվության և ֆոտոլիցքակիրների կյանքի տևողության փոխհարաբերակցությունից: Ինչպես և ունակությունների դեպքում, արտաքին չափվող հոսանքը սկսում է փոփոխվել միայն լուսային ազդանշանի ինտենսի-

վության մոդուլման և լիցքակիրների կյանքի տևողության խիստ որոշակի հարաբերակցության արժեքից սկսած (նկ. 4): Φ_0 -ի (լուսային հոսքերի) մեծ արժեքների դեպքում i_m -ը հասնում է հագեցման, և միաժամանակ նեղանում է f հաճախականային տիրույթը, որտեղ ձևավորվում է ֆոտոհոսանք և, հետևաբար, արտաքին չափվող i_m -հոսանքը: Որքան մեծ է լիցքակիրների կյանքի տևողությունը, այնքան փոքր հաճախությունների դեպքում են տեղի ունենում աղքատացած շերտի ունակության մոդուլման երևույթները:



Նկ. 5. Արտաքին շղթայում չափվող i_m ֆոտոհոսանքի կախումը լույսի Φ_0 հոսքից (ֆոտոն/սմ²) լիցքակիրների կյանքի τ տևողության տարբեր արժեքների դեպքում ($Na=10 \times 10^{15}$ սմ⁻³, $t_{ox}=50$ նմ, $Vg=1$ Վ, $f=10$ կՀց, $R_s=5$ ՄՕհմ, $R_{sc}=10$ ՄՕհմ, $\alpha=10^4$ սմ⁻¹)

Ինչպես երևում է նկ.6-ից, հարթակի լեգիրման Na աստիճանի աճը հանգեցնում է ունակության աճման և արտաքին շղթայում հոսանքի նվազման: Դա առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ լեգիրման աճը հանգեցնում է աղքատացած շերտի ունակության (աղքատացած շերտի հաստության նվազման) մեծացման և այդ ֆոնի վրա փոփոխական ունակության նվազման՝ ունակության հաստատուն բաղադրիչի նկատմամբ և, որպես հետևանք, ֆոտոհոսանքի և արտաքին շղթայում չափվող հոսանքի նվազման:



Նկ. 6. Արտաքին շղթայում չափվող i_m ֆոտոհոսանքի կախումը լույսի Φ_0 հոսքից (ֆոտոն/սմ²վ) *p*-Si հարթակի լեգիրման տարբեր N_a խտությունների, լիցքակիրների կյանքի տևողության տարբեր արժեքների դեպքում ($\tau=10^{-7}$ վ, $t_{ox}=50$ նմ, $V_g=1$ Վ, $f=10$ կՀց, $R_s=5$ ՄՕհմ, $R_{sc}=10$ ՄՕհմ, $\alpha=10^4$ սմ⁻¹)

Եզրակացություն: Կիսահաղորդչային մետաղ-օքսիդ-կիսահաղորդիչ ունակության՝ աղքատացման ռեժիմում ընթացող էլեկտրաֆիզիկական երևույթների խորացման և վերլուծության արդյունքում տեսականորեն կապ է հաստատվել մետաղ-ֆերո-էլեկտրիկ-օքսիդ-կիսահաղորդիչ կառուցվածքի՝ որպես LQSi -ի հիմնական բաղադրիչի պարամետրերի, մասնավորապես, կառուցվածքի ունակության փոփոխման մեխանիզմի և մոդուլացված լույսի հաճախականության և ինտենսիվության միջև, որն այնուհետև հաստատվել է համակարգչային և ֆիզիկական փորձնական հետազոտությունների միջոցով (կներկայացվի այլ հոդվածներում):

Հետազոտության արդյունքները կնպաստեն բազմաֆունկցիոնալ, նոր տեսակի սարքերի նախագծմանը և մշակմանը, ինչը հնարավորություն կտա կիսահաղորդչային մեկ բյուրեղի ծավալում կամ մակերևույթում ինտեգրված բազմաթիվ մեմբրանների (զգայուն նանոթաղանթների) միջոցով կատարել տարբեր նյութերի առկայության և կոնցենտրացիայի ստուգում: Մշակված սարքերը կարող են կիրառվել ոչ միայն կենսաբժշկության, սննդի, դեղագործության, գյուղատնտեսության բնագավառներում, այլև բիրքիմիական տարբեր հետազոտություններում:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 14A-2g47 գիտական թեմայի շրջանակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Hafeman D.G., Parce J.W. and McConnel H.M.** Light-addressable potentiometric sensor for biochemical systems // Science. – 1998. - Vol. 240 (4856). - P. 1182-1185.
2. **Bousse L., Mostarshed S., and Hafeman D.** Investigation of carrier transport through silicon wafers by photocurrent measurements // J. Appl. Phys. – 1994. - Vol. 75 (8). - P. 4000-4008.
3. Minority carrier diffusion length effects on light-addressable potentiometric sensor (LAPS) devices / **M. Sartore, M. Adami, C. Nicolini, et al** // Sens. Actuator A. – 1992. - Vol. 32. - P. 431-436.
4. Portable light addressable potentiometric sensor (LAPS) for multisensory applications / **T. Yoshinobu, M.J. Schöning, R. Otto, et al** // Sensors and Actuators B. - 2003. - Vol. 95. – P. 352–356.
5. **Բունիաթյան Վ.Վ., Սուրբյան Լ.Ն., Դաշտոյան Հ.Ռ.** Լուսահասցեունակ կենսաբժշկական տվիչների հետազոտումը // ՀՊՀՀ ԼՐԱԲԵՐ. Գիտական և մեթոդական հոդվածների ժողովածու. - 2012. - Մաս 1. - Էջ 381-385:
6. **Sze S.M.** Physics of Semiconductor Devices. 3rd ed. - Wiley Inter science, 2006. - 898 p.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացվել է խմբագրություն 10.09.2014:

Л.А. СУКОЯН, В.В. БУНИАТЯН, Т.В. ВАДУНЦ

ХАРАКТЕРИСТИКИ ФЕРРОЭЛЕКТРИК-ОКСИД-ПОЛУПРОВОДНИК СТРУКТУР ПРИ РЕЖИМЕ ЧАСТОТНОЙ МОДУЛЯЦИИ СВЕТОВОГО ЛУЧА

Теоретически исследована фоточувствительность ферроэлектрик-оксид-полупроводник структур, работающих по емкостному принципу под воздействием модулированного по частоте/интенсивности светового луча. Обоснована возможность регистрации, разделения и обработки сигнала, полученного при помощи модулированного светового луча из разных мембран.

Ключевые слова: ферроэлектрик, модулированный свет, полупроводник, МОП структура.

L.H. SUKOYAN, V.V. BUNIATYAN, T.V. VADUNC

THE FERROELECTRIC–OXIDE–SEMICONDUCTOR STRUCTURE CHARACTERISTICS AT THE FREQUENCY MODULATION LIGHT SIGNAL MODE

The photosensitivity of the ferroelectric-oxide-semiconductor structures operating by the capacitive principle under the influence of the frequency intensity of modulated light beam is theoretically investigated. The possibility of registrating, separating and processing the signal obtained from different membranes with the help of modulated light beam is substantiated.

Keywords: ferroelectric, modulated light, semiconductor, MOS structure.

Ա.Կ. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԴԱՍԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ $m=2^k$ ՍՈՂՈՒԼՈՎ
ԲԱԶՄԱՊԱՏԿՄԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

Դիտարկված են արագագործության տեսակետից արդյունավետ մնացորդային դասերի համակարգում $m=2^k$ մոդուլով բազմապատկման գործողության ավգորիթներ, սարքի (մոդուլային բազմապատկիչների) կառուցվածքային սխեման՝ նախագծման և տրամաբանական սինթեզման ժամանակակից միջոցների կիրառմամբ:

Առանցքային բառեր. մոդուլային թվաբանություն, մոդուլային բազմապատկիչներ, օպերացիոն ավտոմատ, դեկավարող ավտոմատ, մոդուլային բազմապատկման սարքի RTL նկարագրում:

Թվային սարքերին անընդհատ ներկայացվող արագագործության բարձրացման պահանջների տեսակետից մնացորդային դասերի համակարգը (մոդուլային թվաբանությունը) դիտարկվում է որպես արագագործության բարձրացման և հաշվարկների ապահովման միջոց: Մնացորդային դասերի համակարգի օգտագործումը թույլ է տալիս էականորեն բարձրացնել թվաբանական հաշվարկների արագությունը՝ մնացորդների հետ գործողությունների զուգահեռ կատարման շնորհիվ [1]:

Աշխատանքում առաջադրված խնդրի լուծումը կարելի է իրականացնել երկու եղանակով՝ ինդեքսային բազմապատկման մեթոդով (կամ՝ դիսկրետ-լոգարիթմական մեթոդ) [2] և երկու դրական թվերի սովորական երկուական բազմապատկմամբ, որից, որպես վերջնական արժեք, վերցված են ընդհանուր արտադրյալի ցածր k բիթերը:

Դիտարկված է մնացորդային դասերի համակարգում $m=2^k$ մոդուլով մոդուլային բազմապատկիչների նախագծման այն սկզբունքը, որը հիմնված է մոդուլային թվաբանության և դասական բուլյան հանրահաշվի հատկությունների միավորման վրա: Շնորհիվ մոդուլային թվաբանության հատկանիշների՝ 2^k մոդուլով մոդուլային բազմապատկիչների իրագործումը կարելի է իրականացնել հետևյալ կերպ:

Ենթադրենք՝ տրված են a և b դրական թվերը՝ $a > 0$ և $b > 0$, և նրանց $P=axb$ արտադրյալը: Եթե երկու թվերը փոքր են մոդուլի 2^k արժեքից, և a և b թվերը կարող են ներկայացվել n բիթերով (երկու թվերն ունեն միևնույն կարգայնությունը), ապա թվերի P արտադրյալը կարող է ներկայացվել հետևյալ բանաձևով՝

$$P = \sum_{i=0}^{2n-1} r_i \cdot 2^i, \quad (1)$$

որտեղ r_i -ն a և b թվերի բազմապատկման i -րդ բիթն է:

(1) Բանաձևը գրենք ընդլայնված տեսքով՝

$$P = \sum_{i=0}^{n-1} r_i \cdot 2^i + 2^n \sum_{i=n}^{2n-1} r_i \cdot 2^{i-n} \quad (2)$$

Հաշվարկենք (2) արտահայտության արժեքը մոդուլի համար: Հարմարության համար փոխարինենք 2^k մոդուլի տեսքը m -ով: Համապատասխանաբար, այդ արտահայտությունը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով՝

$$|P|m = \left| \sum_{i=0}^{n-1} r_i \cdot 2^i + |2^n|m \cdot \sum_{i=n}^{2n-1} r_i \cdot 2^{i-n} \right| m \quad (3)$$


Հաշվի առնելով այն փաստը, որ $|2^k|m=0$, արտահայտություն (3)-ը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝

$$|P|m = \left| \sum_{i=0}^{n-1} r_i \cdot 2^i \right| m \quad (4)$$

Նկատի ունենալով այս ամենը՝ $m=2^k$ մոդուլով մոդուլային բազմապատկիչը ներկայացնում է a և b դրական թվերի սովորական երկուական բազմապատկիչ, որից որպես վերջնական արժեք վերցված են ընդհանուր $P=axb$ արտադրյալի ցածր k բիթերը [3,4]:

Որպես հիմք ընդունելով a և b դրական թվերի բազմապատկման երկուական ալգորիթմը, ըստ որի բազմապատկումը կատարվում է n տակտում (n -ը արտադրիչների կարգերի քանակն է), առաջարկվում է $m=2^k$ մոդուլով մոդուլային բազմապատկման ալգորիթմ, համաձայն որի բազմապատկումը կատարվում է k տակտում, եթե $k \leq n$, և n տակտում, եթե $k > n$: Ալգորիթմի բլոկ-սխեման ներկայացված է նկ.1-ում:

Երկու n -կարգանի a և b թվերը տեղակայվում են համապատասխանաբար ra և rb ռեգիստրներում: m մոդուլի արժեքը տեղակայվում է $rmod$ ռեգիստր: Երկուական բազմապատկման գործողության իրականացման համար առանձնացվում է նաև rsm ռեգիստրը, որտեղ կգրանցվեն բազմապատկման ընթացքում ձևավորվող միջանկյալ գումարման արդյունքները, ինչպես նաև *result* վերջնական արդյունքի ռեգիստրը, որտեղ կգրանցվի $P=(axb) \bmod m$ մոդուլային բազմապատկման արդյունքը: a կամ b թվերի գրոյին հավասար լինելը ստուգելուց հետո ($X2$ պայմանը) առանձին ալգորիթմով կատարվում է k արժեքի հաշվարկը, որը տեղակայվում է CT հաշվիչ, քանի որ բազմապատկման գործողությունը կատարվելու է ոչ թե n , այլ k տակտերի ընթացքում: Համաձայն դասական երկուական, առանց նշանի թվերի բազմապատկման ալգորիթմի՝ արտադրյալի բարձր կարգերը ձևավորվում են rsm ռեգիստրում, իսկ ցածր կարգերը՝ rb ռեգիստրում:




Նկ. 1. $m=2^k$ մոդուլով մոդուլային բազմապատկիչի ալգորիթմի բլոկ-սխեման

Ելնելով այս փաստից, $P=(axb)\bmod m$ մոդուլային բազմապատկման արդյունքի վերջնական արժեքի ձևավորման համար անհրաժեշտ է քննարկել երկու դեպք՝ երբ $k \leq n$, և երբ $k > n$ (X5 պայմանը):

Եթե $k \leq n$, ապա *result* ռեգիստրում տեղակայվում են *rb* ռեգիստրի բարձր k բիթերը ($result=rb[n-1:n-k]$), հակառակ դեպքում *result* ռեգիստրում տեղակայվում են *rsm* ռեգիստրի ցածր $p=n-k$ բիթերը՝ միավորված *rb* ռեգիստրի n բիթերի հետ ($result=\{rsm[p-1:0],rb[n-1:0]\}$):

Համաձայն նկ.1-ում ներկայացված ալգորիթմի՝ մշակվել է ղեկավարող ազդանշաններով համալրված 2^k մոդուլով մոդուլային բազմապատկման սարքի կառուցվածքային սխեման (նկ. 2):



Նկ. 2. $m=2^k$ մոդուլով մոդուլային բազմապատկիչի կառուցվածքային սխեման

Ղեկավարող ազդանշանները նշված են նկ. 1-ում բերված ալգորիթմի բլոկ-սխեմայի օպերացիոն բլոկներին համապատասխան և ձևավորվում են FSM (Final State Machine) ղեկավարող ավտոմատի միջոցով [5] :

Կառուցվածքային սխեմայում *SM1* գումարիչը կատարում է սովորական երկուական գումարում և երկուական բազմապատկման գործողության կատարման ֆունկցիոնալ հանգույցն է, իսկ *SM2* գումարիչի միջոցով որոշվում է n և k արժեքների տարբերությունը, և հաշվարկվում է p արժեքը ($p=n-k$):

Այնուհետև վերլուծվում է SM2 գումարիչի բարձր բիթը, եթե այն հավասար է զրոյի, ապա կարելի է եզրակացնել, որ $k \leq n$, հակառակ դեպքում՝ $k > n$:

Առանձին ուշադրության է արժանի k արժեքի որոշումը: Քանի որ այն հաշվարկվում է $k = \log_2 \text{mod}$ բանաձևին համաձայն, ապա անհրաժեշտ է հաշվարկել m մոդուլի արժեքի լոգարիթմը: Այս հաշվարկն իրականացնելու համար բավական է $r \bmod$ տեղաշարժող ռեգիստրի աջ տեղաշարժերի միջոցով որոշել միակ «1» արժեքի դիրքը (կարգը), ինչը և կհանդիսանա $\log_2 \text{mod}$ արտահայտության արժեքը:

2^k մոդուլով մոդուլային բազմապատկիչների նախագծման համար Verilog լեզվով RTL-նկարագրման ժամանակ սարքի յուրաքանչյուր բլոկը նկարագրվում է առանձին *always* պրոցեդուրային օպերատորի միջոցով, իսկ, եթե այն կոմբինացիոն սխեմա է, ապա կարող է նկարագրվել նաև *assign* օպերատորի կիրառմամբ: Մասնավորապես՝

```
module
...
always @ (posedge clk )
begin
if(y1) begin ready1=0;ready=0; ra=a; rb=b; rmod=mod;acc=0;cout=0;result=0; end else
if(y2) begin ct=4'b1000; end else
if(y3) {cout,acc}=acc+ra; else
if(y4) begin rb={acc[0],rb[n-1:1]}; acc={cout,acc[n-1:1]}; ct=ct-1; end else
if(y5) ct=ct;
if(y6) begin rk={acc,rb}; r1=rk;r2=rk; ready=1; end
if(y7) begin r1=r1-rmod; r2=r1; end
if(y8) begin result=r2[m-1:0]; ready1=1; end
ready1=0; end
...
assign x2=(ra||rb==0);
assign x3=(rb[0]);
assign x4=(ct==0);
assign x5=(r1<rmod);
...
endmodule
```

Արդյունքում՝ ստացվում է սարքի RTL-նկարագրումը, որի հիմքի վրա կարելի է սինթեզել սխեման:

2^k մոդուլով մոդուլային բազմապատկիչների կառուցման համար կարելի է առաջարկել նաև փոխանցումը պահպանող գումարիչների հիման վրա կառուցված $k/2$ -կարգանի կոմբինացիոն բազմապատկիչների կիրառումը, սակայն, ինչպես նշվել է, որպես ապարատային ծախսեր պահանջվում են $5k/2$ լրիվ գումարիչներ, իսկ փոխանցման ազդանշանի տարածման ժամանակը՝ $3k/2 + 2(k/2 - 1) - 1 = 5k/2 - 3$ [6]:

Եզրակացություն: Ելնելով վերը նշվածից՝ կարելի է եզրակացնել, որ $m=2^k$ մոդուլով մոդուլային բազմապատկիչների նախագծման առաջարկված եղանակը ավելի արդյունավետ է արագագործության և օգտագործվող գումարիչների կարգայնության տեսանկյունից (k տակտ)՝ համեմատած ավանդական ըստ $\text{mod } m$ -ի բազմապատկման մեթոդի, այսինքն՝ կատարվում է սովորական բազմապատկում և հաջորդող բաժանում m -ի մոդուլի վրա, քանի որ բաժանարարի (մոդուլ m -ի արժեքի) նորմալացման, քանորդի յուրաքանչյուր բիթի հաշվարկման և, ի վերջո, վերջնական մնացորդի, որը և կհանդիսանա $(axb) \bmod m$ արդյունքը, հնարավոր նորմալացման անհրաժեշտ գործընթացները կարող են արագագործության նվազեցման պատճառ դառնալ ($(n+2n-\log_2 m+3)$ տակտ՝ n տակտ բազմապատկման, $2n-\log_2 m+1$ տակտ քանորդի կարգերի որոշման և 2 տակտ բաժանարարի և վերջնական մնացորդի նորմալացման համար):

Աղյուսակում ներկայացված են երկուական բազմապատկման և հաջորդող՝ m -ի մոդուլի վրա բաժանման եղանակով (եղանակ 1) և առաջարկվող՝ $m=2^k$ մոդուլով մոդուլային բազմապատկիչների եղանակով (եղանակ 2) կառուցված սարքերի աշխատանքի ժամանակի և օգտագործվող գումարիչների վերլուծությունները $n=8$ և $n=16$ կարգայնություն ունեցող թվերի դեպքում:

Աղյուսակ

Մոդուլի արժեք	n=8				n=16			
	Եղանակ 1		Եղանակ 2		Եղանակ 1		Եղանակ 2	
	Տակտ. քանակ	Գումարիչ. քանակ	Տակտ. քանակ	Գումարիչ. քանակ	Տակտ. քանակ	Գումարիչ. քանակ	Տակտ. քանակ	Գումարիչ. քանակ
m=16 k=4	23	1x8 և 1x16 կարգ. ՏՄ	4	2x8կարգ. ՏՄ	47	1x16և 1x32 կարգ. ՏՄ	4	2x16 կարգ. ՏՄ
m=64 k=6	18	1x8 և 1x16 կարգ. ՏՄ	6	2x8կարգ. ՏՄ	45	1x16և 1x32 կարգ. ՏՄ	6	2x16 կարգ. ՏՄ
m=1024 k=10	13	1x8 և 1x16 կարգ. ՏՄ	8	2x8կարգ. ՏՄ	41	1x16և 1x32 կարգ. ՏՄ	10	2x16 կարգ. ՏՄ

Ինչպես երևում է աղյուսակից, $m=2^k$ մոդուլով մոդուլային բազմապատկիչների եղանակով (եղանակ 2) կառուցված սարքերի արագագործությունը զգալիորեն բարձրանում է, իսկ ապարատային ծախսերը (մասնավորապես՝ գումարիչների քանակը և կարգայնությունը) կրճատվում:

Նշենք, որ $m=2^k$ մոդուլով մոդուլային բազմապատկիչները կարող են կիրառվել նաև $m=2^{k+1}$ և $m=2^{k-1}$ մոդուլներով կոդերի հսկում իրականացնող մասնագիտացված սարքերում, իսկ այն մասնավոր դեպքերում, երբ $m=2^{k+1}$ և $m=2^{k-1}$ թվերը պարզ թվեր են (օրինակ՝ $m=2^4+1=17$, $m=2^8+1=257$, $m=2^5-1=31$, $m=2^8-1=127$ և այլն), ապա նմանատիպ բազմապատկիչները կարող են կիրառվել նաև որոշ ալգորիթմներով (RSA գաղտնագրման ալգորիթմ, ԴիՖֆի-Հելլմանի գաղտնագրման բանալիների գեներացման ալգորիթմ) գաղտնագրման սարքերի կառուցման դեպքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Акушский И.Я., Юдицкий Д.И.** Машинная арифметика в остаточных классах. – М.: Советское радио, 1968.- 486с.
2. **Կիրակոսյան Գ.Տ., Սաղաթելյան Ա.Կ.** Մնացորդային դասերի համակարգում ինդեքսային մեթոդով բազմապատկման սարքերի նախագծումը // Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում. Գիտական հոդվածների ժողովածու.- 2014.- Մաս 1.- էջ 110-115:
3. **Taylor F.** LargeModuliMultipliersforSignalProcessing // IEEE Transactionson Circuits and Systems.- 1981.- Vol. CAS-28, N7.- P. 731–736.
4. Исследование и разработка методов аппаратной реализации базовых элементов и основных вычислительных процедур для специализированных устройств цифровой обработки сигналов с применением нетрадиционной арифметики: Отчет о НИР (заключ.), шифр "Вега-К-2004" / ИПИМРАН; рук. А.Л. Стемповский. – М., 2007. - № ГР01200410531. - Инв. № 02200601688.
5. **Стемповский А.Л., Корнилов А.И., Семёнов М.Ю.** Особенности реализации устройств цифровой обработки сигналов в интегральном исполнении с применением модулярной арифметики // Информационные технологии.- 2004.- №2.- С. 2–9.
6. **Туманян А.К., Сагателян А.К.** Построение схем умножения на основе комбинационных умножителей // Моделирование, Оптимизация, Управление. ISSN 1829-216x: Вестник ГИУА.- 2011.- Вып. 14, том 1.- С. 82-91.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացված է խմբագրություն 31.09.2014:

Ա.Կ. ՏԱԳԱՏԵԼՅԱՆ

ПРОЕКТИРОВАНИЕ УСТРОЙСТВ УМНОЖЕНИЯ ПО МОДУЛЮ $m=2^k$ В СИСТЕМЕ ОСТАТОЧНЫХ КЛАССОВ

Рассмотрены эффективный, с точки зрения быстродействия, алгоритм и структурная схема устройства умножения по модулю $m=2^k$ в системе остаточных классов с применением современных методов проектирования и логического синтеза.

Ключевые слова: модулярная арифметика, модулярные умножители, операционный автомат, управляющий автомат, RTL описание устройства модулярного умножения.

A.K. SAGHATELYAN

DESIGNING MULTIPLIERS BY THE MODULE $m=2^k$ IN THE SYSTEM OF RESIDUAL CLASSES

An efficient, in terms of fast performance, algorithm anda blockdiagram of a multiplication device by the module $m = 2^k$ in the system of residual classes by using modern methods of design and logic synthesis are considered.

Keywords: modular arithmetic, modular multipliers, operating unit, control unit, RTL description of the device for modular multiplication.

М.В. МАРКОСЯН, В.Г. АВЕТИСЯН, А.А. МАНУКЯН, М.А. МОСЕСОВ,
В.Х. ТОНОЯН, А.Е. САРЬЯН, Р.М. ПЕТРОСЯН, Э.А. АРУТЮНЯН,
К.А. КАЗАРЯН

АНТЕННАЯ СИСТЕМА МОБИЛЬНОЙ РАДИОЛОКАЦИОННОЙ СТАНЦИИ ДИАПАЗОНА МЕТРОВЫХ ВОЛН

Описывается комплекс технических решений, направленных на значительное сокращение времени сворачивания (разворачивания) антенной системы радиолокационной станции диапазона метровых волн. Приведенные и реализованные решения для механики антенной системы и системы ее управления способствуют повышению мобильности радиолокационной станции.

Ключевые слова: антенная система, радиолокационная станция, диапазон метровых волн.

Введение. В [1] обоснована необходимость мероприятий по повышению мобильности радиолокационной станции (РЛС) диапазона ультракоротких волн (УКВ) путем значительного сокращения времени сворачивания (разворачивания) ее антенной системы, а также показана взаимосвязь мероприятий радиотехнического и конструкторско-технологического планов.

Цель работы – представить конструкторско-технологические решения в механике антенной системы, охватывающей антенную решетку и антенно-мачтовое устройство, и в системе автоматического управления разворачиванием и сворачиванием антенной системы РЛС.

Рабочая антенная система. Антенная система РЛС содержит:

- антенную решетку;
- антенно-мачтовое устройство;
- подсистему энергоснабжения и автоматического управления.

Вся антенная система размещена на трехосной платформе контейнера стандартного трейлера. На рис.1 приведен фотоснимок антенной системы в рабочем состоянии на несущей платформе контейнера, а на рис. 2 - фотоснимок антенной системы в свернутом состоянии.

Регулируемые по высоте опоры платформы в количестве 6-и штук - четыре неподвижные и две выдвижные опоры (размах между ними 5,4 м), создают достаточные плечи, обеспечивающие устойчивое и стабильное состояние антенной системы при наличии моментов, обусловленных весовыми и ветровыми нагрузками в процессе эксплуатации. Горизонтирование платформы осуществляет специальная программно-аппаратная подсистема регулирования опор по высоте.

Задача перевода антенной системы РЛС в транспортное положение состоит в ее укладке в контейнер, имеющий длину 13,62 м, ширину 2,55 м и высоту 2,48 м. Поскольку горизонтальный размер антенной решетки составляет 17,7 м [1], общая горизонтальная ферма выполнена в виде двух составных складывающихся ферм длиной по 8,8 м каждая, что достаточно для размещения решетки в сложенном состоянии по длине контейнера. Деление общей фермы на более чем две части нецелесообразно с точки зрения увеличения ширины сборной фермы и усложнения ее конструкции дополнительными узлами.



Рис. 1. Фотоснимок смонтированной на платформе антенной системы



Рис. 2. Фотоснимок антенной системы в свернутом состоянии

Антенная решетка. Основными составными узлами антенной решетки являются центральная секция и две складывающиеся фермы излучателей антенной решетки. Фермы закреплены к бокам центральной секции с помощью осей. Перечисленные основные узлы показаны на фотоснимке, приведенном на рис. 3.




Рис. 3. Фотоснимок антенной решетки

Фермы изготовлены из стальных труб круглого сечения для уменьшения аэродинамического сопротивления и обледенения [2 - 4]. Каждая ферма состоит из двух этажей излучателей в виде кольцевых антенн [5] по 12 штук в каждом

линейном ряду этажа, а каждый излучатель имеет держатель 1 (см. рис. 4) с шарнирной опорой 2, закрепленной на ферме. Вертикальный рабочий габаритный размер фермы с антеннами составляет 3,6 м. В верхней части центральной секции размещен верхний электрошкаф подсистемы энергоснабжения и автоматического управления, обеспечивающий автоматическое сворачивание (разворачивание) антенн и ферм с помощью соответствующих актуаторов.

Держатели группы из 6-и антенн каждого этажа фермы соединены между собой горизонтальной тягой 3, чье горизонтальное смещение осуществляется актуатором 4 укладки антенн в горизонтальное положение при переводе антенной системы в транспортное состояние. Возможность такой укладки антенн обеспечивается смещением в 0,08 м (в вертикальной плоскости) антенн нижнего ряда относительно антенн верхнего ряда. При уложенном состоянии антенн вертикальный габаритный размер фермы равен 2,1 м, что меньше высоты контейнера и позволяет укладку в него сложенных ферм антенной решетки.




Рис. 4. Фрагмент фермы антенной решетки




Рис. 5. Основные составные единицы антенно-мачтового устройства

Четыре актуатора тяг групп из 6-и антенн и делители высокочастотной мощности низких уровней с соответствующими фидерами размещены на составных фермах антенной решетки. Делители же высокочастотной мощности высоких уровней размещены в центральной секции. На ней также установлены актуаторы сворачивания (разворачивания) составных ферм. Для снятия ветровых нагрузок на актуаторы в рабочем развернутом положении решетки фермы снабжены электромеханическими фиксаторами [6, 7].

Антенно-мачтовое устройство. На фотоснимке (см. рис. 5) указаны основные составные единицы антенно-мачтового устройства. Это его основание – надрамник, телескопическая мачта, которая закреплена к надрамнику двумя шарнирными узлами на подшипниках, два соответствующих актуатора для приведения телескопической мачты из транспортного горизонтального положения в рабочее вертикальное положение и наоборот, а также центральный узел, находящийся под центральной секцией антенной решетки.

Привод выдвижной внутренней трубы телескопической мачты обеспечивает расположение центра симметрии антенной решетки на высотах от 6,5 до 9,7 м с дискретом 0,8 м. В каждом положении внутренняя верхняя труба телескопической мачты фиксируется клиновым фиксатором. Выдвижение внутренней трубы мачты осуществляется с помощью тросовой системы от лебедки, расположенной на внешней поверхности нижней наружной трубы. На ее внутренней поверхности закреплены специальные направляющие, вдоль которых выдвигается внутренняя труба. Во внутренней полости мачты расположена металлическая кабельная цепь, обеспечивающая правильную и безопасную укладку радиочастотных кабелей и кабелей электропитания в процессе выдвижения внутренней трубы мачты [8].

Центральный узел антенно-мачтового устройства изображен на рис. 6.




Рис. 6. Центральный узел антенно-мачтового устройства и центральная секция антенной решетки

Основой центрального узла служит азимутальная платформа 1. На азимутальной платформе размещены главный подшипник 2, электродвигатель азимутального привода 3, коллектор электрических цепей, радиочастотный вращающийся переход, азимутальный n-кодер. Актуаторы 4 обеспечивают горизонтальность платформы. Инклинометр производит отсчет текущего значения угла отклонения плоскости азимутальной платформы от перпендикулярности относительно вертикальной оси мачты.

Азимутальный привод с частотным управлением обеспечивает азимутальное вращение антенной решетки со скоростями в интервале (3...6) об/мин, а также плавные режимы разгона и остановки ее вращения на телескопической мачте.

Движение актуаторов 4 горизонтальности азимутальной платформы в процессе сворачивания или разворачивания программно синхронизировано с движением актуаторов подъема нижней трубы телескопической мачты.

Корректировка и контроль положения антенной решетки по углу места осуществляются n-кодером угла места и соответствующим актуатором 5, обеспечивающим заданное угломестное положение решетки в интервале углов от -5° до $+15^\circ$. Позицией 6 обозначены актуаторы ферм.

Подсистема энергоснабжения и автоматического управления. Подсистема содержит два дизель-генератора автономного питания (рабочий и резервный) и нижний электрошкаф управления и контроля, размещенные на платформе контейнера. В состав этой подсистемы входит также расположенный в верхней части центральной секции антенной решетки верхний электрошкаф управления и контроля. Эти единицы указаны на рис. 7.



Рис. 7. Основные единицы подсистемы энергоснабжения и автоматического управления

Комплекс управления антенной системой представляет собой сложную программно-аппаратную реализацию, обеспечивающую автоматическое синхронное функционирование всех механизмов антенной системы и их контроль. Процессы сворачивания (разворачивания) излучателей и ферм антенной решетки, их фиксации, горизонтирования установки антенной решетки, а при необходимости, корректировки ее рабочего положения по углу места обеспечиваются верхним электрошкафом и его контроллером. Нижний электрошкаф и его контроллер обеспечивают процесс азимутального вращения антенной решетки с заданной скоростью и в заданном режиме, процесс установки телескопической мачты антенной системы из транспортного положения в рабочее и наоборот, а также процесс подъема антенной решетки на заданную рабочую высоту и ее фиксацию. Разработанное программное обеспечение позволяет диагностировать состояние всех узлов, положения датчиков и выдавать соответствующие команды на исполнение. В качестве протокола обмена данными между контроллерами выбран «CANOPEN», позволяющий повысить надежность обмена данных на относительно большие расстояния.

Структура управления предусматривает два режима – автоматический режим по принципу “с одной кнопки” и ручной режим, обеспечивающий автономное управление каждым механизмом.

Пульт оператора представляет собой терминал, содержащий кнопки управления и информационное табло, на котором высвечиваются необходимые световые и словесные подсказки. Пульт управления изображен на рис. 8.




Рис. 8. Пульт управления

Этапы автоматического разворачивания и сворачивания антенной системы. На рис. 9 - 14 представлен процесс автоматического разворачивания антенной системы, состоящий из 6-и последовательных этапов при их следующих конечных состояниях:

- первый этап - тент контейнера трейлера сложен, опоры платформы контейнера приведены в рабочее положение; максимальная продолжительность – 5 мин;
- второй этап - телескопическая мачта антенной системы поднята и составляет угол 60° относительно горизонта; продолжительность подъема – 2 мин 11 с;
- третий этап – излучатели антенной решетки развернуты и приведены в рабочее вертикальное состояние; продолжительность – 56 с;
- четвертый этап - фермы антенной решетки развернуты в рабочее состояние и зафиксированы; продолжительность – 3 мин 7 с;
- пятый этап - телескопическая мачта поднята в рабочее вертикальное положение; продолжительность - около 1 мин;

- шестой этап – антенная решетка поднята на требуемую высоту, и начинается ее азимутальное вращение; максимальная продолжительность – 3 мин;

Этапы автоматического сворачивания выполняются в обратном порядке. Общее максимальное время разворачивания (сворачивания) составляет 15 мин.




Рис. 9. 1-й этап




Рис. 10. 2-й этап




Рис. 11. 3-й этап




Рис. 12. 4-й этап




Рис. 13. 5-й этап




Рис. 14. 6-й этап

Краткий обзор по проектированию конструкций антенной системы.

